ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ‹‹ՆՈՐԱՇԵՆԻ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ›› ՊՈԱԿ- Ի ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ ԱՆՆԱ ՄԿՐՏՉԻ ԱԶԱՏՅԱՆ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**2023-2028 Թ.Թ.**






## ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

| | |
|---|---|
| **ՀՀ Արարատի մարզի «Նորաշենի Ավ. Իսահակյանի անվ. միջն. դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակված է** | **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան:** |

| | |
|---|---|
| Դպրոցի զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մեթոդաբանական հիմքերը | **Դպրոցի ներքին գործունեության վերջին երեք տարիների ներքին գնահատման հաշվետվությունները** |
| | «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը», «Երեխայի իրավունքների մասին » օրենք, Դպրոցի կանոնադրությունը |
| | «Կրթության մասին օրենք», «Կրթության զարգացման պետական ծրագիր» |
| | «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք , Հանրակրթության պետական չափորոշիչ |
| | «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք , Հանրակրթության պետական չափորոշիչ |
| | ՀՀ կառավարության կողմից հաստատված առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը |
| | Դպրոցի նախորդ 5 տարիների ձեռք բերած հաջողությունները, արձանագրված թերությունները |
| | Նորաշեն համայնքի առանձնահատկությունները: |
| Դպրոցի զարգացման ծրագիրը | նախնական աշխատանքային փաստաթուղթ է՝ հիմնված դպրոցի ներկայիս վիճակի վերլուծության, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած հանրակրթության զարգացման առաջնահերթությունների, դպրոցի համակազմի և համայնքի կարիքների բացահայտման, նորամուծությունների ներդրման վրա, ապագայի ցանկալի տեսլականին հասնելու քայլերի և |

| | |
|---|---|
| | ակնկալվող արդյունքների ներկայացմամբ:<br>Պլանավորված գործողությունների և ներդրումների համախումբ է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների և խնդիրների իրագործմանը՝ հիմք ընդունելով ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված «Կրթության զարգացման պետական ծրագրի» սահմանած դրույթները:<br>Հայաստանում մարդկային կապիտալը դիտվում է որպես երկրի զարգացման հիմնական ռեսուրս, իսկ կրթությունը՝ մարդկային կապիտալի զարգացման որոշիչ գործոնը:<br>Լինելով փոքր պետություն, մարդկային կապիտալի տեսանկյունից կարևորվում է յուրաքանչյուր քաղաքացին, հասարակության յուրաքանչյուր անդամ՝ որպես մարդկային կապիտալի մի մասնիկ:<br>Կրթության զարգացման տեսլականը կառուցված է այն դիրքորոշմամբ, որ յուրաքանչյուրն օժտված է որոշակի տաղանդով, և կրթության համակարգի **առաքելությունն է** բացահայտել յուրաքանչյուր սովորողի տաղանդները և հնարավորինս զարգացնել դրանք՝ ուղղորդելով դեպի պետության ամրապնդումը և տնտեսության զարգացումը: |
| «Կրթության զարգացման պետական ծրագիրը» սահմանում է | ա/ ՀՀ հանրակրթության ոլորտի զարգացման հեռանկարային ուղղությունները, նպատակներն ու խնդիրները<br>բ/ Երկրի զարգացման առաջնահերթություններից և հանրակրթության հիմնական նպատակներից բխող բարձրակարգ կրթության ապահովումը<br>«Մինչդեռ արագ զարգացող և փոփոխվող հասարակությունն ու տնտեսությունը նոր մարտահրավերներ են ներկայացնում կրթության համակարգին՝ թելադրելով նոր բովանդակության, 21-րդ դարի տնտեսության և քաղաքացիական հասարակության առանցքային կարողությունների ներառման անհրաժեշտություն կրթական ծրագրերում: Առանձնակի կարևորվում են մաթեմատիկայի, բնական գիտությունների, ճարտարագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների (ԲՏՃՄ–STEM) ոլորտներում սովորողների պատրաստվածությունը, օտար լեզուների տիրապետումը, ինչպես նաև սովորողների քննադատական, վերլուծական, նորարարական, ինքնուրույն և ստեղծագործական մտածողության զարգացումը»: |
| Ծրագրի նպատակը | ա/Հասարակական պահանջմունքից բխող և ազգային պետության պահանջներին համապատասխանող հայ մարդու և քաղաքացու դաստիարակություն<br>բ/Համայնքի կարիքներին համապատասխանող կրթության բովանդակության և համապատասխան միջավայրի ապահովում՝ հենվելով կրթական արդի տեխնոլոգիաների և ոլորտի ժամանակակից միտումների վրա, որոնք համահունչ են ազգային արժեհամակարգին |
| Ծրագրի խնդիրներ | ա/Ստեղծել համապարփակ բազա՝ հայտորոշման տարբեր գործիքների կիրառմամբ<br>բ/Ամբողջացնել վերլուծական ամբողջական բազա ՝ ի հայտ բերելու առաջիկա 5 տարիների զարգացման առաջնահերթություններն ու դրանցից բխող քայլերը<br>գ/Մշակել կամ վերաձևակերպել ներքին նորմատիվ ակտեր, որոնք բխում են առաջիկա հինգ տարիների առաջնահերթություններից և կրթության քաղաքականության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներից<br>դ/Կազմել նախանշված ռազմավարական ուղղություններով ծրագրերի և գործողությունների կանոնակարգում |

| | |
|---|---|
| Ծրագրի ակնկալվող արդյունքները | ա/Կձևավորեն կարողունակ քաղաքացիներ<br>բ/կապահովեն կրթական տարբեր աստիճաններում սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացումը<br>գ/ կնպաստեն նոր բովանդակության և նորարարական կրթական մեթոդների և մոտեցումների ներդրմանը<br>դ/ համայնքի կարիքներին և արդի կրթության պահանջներին համապատասխան կապահովեն կրթական արդիականացված միջավայր<br>ե/ կիրացվի գործող օրենսդրության հիման վրա երեխայի՝ սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքը<br>զ/ կապահովեն կրթության գաղափարախոսական հենք՝ հենված ազգային պետության և համամարդկային արժեքների ներդաշնակեցման սկզբունքների վրա<br>է/ կապահովեն որակյալ կրթության մատչելիություն<br>ը/ կընձեռեն կրթության տարբեր ձևաչափերի ընտրության հնարավորություններ<br>թ/ կապահովեն սովորողների ստեղծարար մտքի զարգացում կրթության մեթոդների անհատականացման և արդիականացման միջոցով<br>ժ/ կառաջացնեն ազգային արժանապատվության բարձր գիտակցություն, ազգային արժեքների կարևորման ու դրանց պահպանման պատասխանատվություն<br>ի/ կօգնեն ստեղծել ինտեգրված սոցիալական միջավայր և ունենալ իր ներուժին և նախասիրություններին համապատասխան մասնագիտական կողմնորոշում ունեցող քաղաքացիներ: |
| Ծրագրի վերջնական նպատակն է.<br><br>Զարգացման ծրագրի հիմքում դրվող սկզբունքները | Ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված ՀՀ զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ, որը յուրաքանչյուրին, կյանքի բոլոր փուլերում, հնարավորություն է տալիս ստանալ իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, ապահովում է շրջանավարտների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը:<br>Սույն վերջնական նպատակի իրականացման համար սահմանվել են հետևյալ ռազմավարական ուղղությունները.<br>1/ **համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում**, որը յուրաքանչյուր սովորողի համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման և անձնային առանձնահատկություններից բխող որակյալ և արդյունավետ կրթական ծառայությունները,<br>2/ **կրթության արդյունավետության բարձրացում**, ինչը կապահովի ռեսուրսի / ներառյալ մարդկային/ առավելագույն օպտիմալ և արդյունահենք տեղաբաշխում, , համակարգի գործընթացային, ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացում,<br>3/ **կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում և արտահանում,** որը խարսխված է լինելու միջազգային կրթական տիրույթում և համակարգերում հայկական կրթական համակարգի ինտեգրմանը:<br>Ծրագրի հիմքում դրվել են հետևյալ արժեքային և գործառնական սկզբունքները<br>1/ սովորողակենտրոն՝ յուրաքանչյուր որոշում կայացնելիս<br>2/ դպրոցի ինքնավարության և հանրային հաշվետվողականության ու թափանցիկության հավասարակշռում<br>3/ կրթական գործընթացի կազմակերպման մեջ բոլոր շահակիցների և շահառուների պատասխանտվության առկայություն, նրանց հանդեպ վստահություն<br>4/ ներառականություն և մասնակցայնություն՝ հասարակության բոլոր խավերի ընդգրկում ծրագրի մշակման և իրագործման ընթացքում: Յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձի փոխադարձ կապի գործուն և թափանցիկ ներդրմամբ հնարավորության ընձեռում, ներդրում ունենալու որոշումների կայացման, ծառայությունների մատուցման և արդյունքների գնահատման գործընթացում:<br>5/ Կրթության հասանելիությանը, սոցիալական պաշտպանությանն ու աղքատության հաղթահարման ապահովում:<br>6/ Ազգային և համամարդկային արժեքների համադրում՝ եվրոպական և տարածաշրջանային կրթական ինտեգրացիոն գործընթացներում՝ ազգային շահերի, կրթական առաջադեմ ավանդույթների և նվաճումների պահպանմամբ ու զարգացմամբ:<br>7/ Կրթության գործընթացում հավասարության ապահովումը համարել կրթական քաղաքականության անկյունաքարային սկզբունք: |

| | |
|---|---|
| | 8/ Արտերկրի հայկական կրթօջախների և համայնքային կառույցների հետ շարունակական երկխոսության ապահովում:<br>10/ Կանաչ կրթության միջոցով շրջակա միջավայրի կայունության ապահովում՝ մանկավարժներին սովորողներին, ծնողական համայնքին կանաչ գործարքի վերաբերյալ իրազեկելու և ներգրավելու համար: |




| | | |
|---|---|---|
| Դպրոցի անունը | ՀՀ Արարատի մարզի «Նորաշենի Ավ. Իսահակյանի անվ. միջն. դպրոց » ՊՈԱԿ | |
| **Հիմնադրման տարեթիվը** | 1914թ. | |
| **Իրավաբանական անձի պետական րանցման վկայական պետռեգիստրի կողմից տրված վկայական** | Հաստատված է ՀՀ կառավարության 2001 թ. հուլիսի 4-ի N 601 որոշմամբ 03Ա057427 | |
| **Անշարժ գույքի գրանցումը** | Հաստատված է 26.12.2017թ Անշարժ գույքի վկայական N 26122017-03-0018 | |
| **Կանոնադրությանհաստատման գրանցման թիվ** | ՀՀ Արարատի մարզպետի20.09.2017թ. թիվ 94 որոշում՝ 52210.01105 | |
| **Լիցենզիայի հրաման** | ՀՀ Կրթության և գիտության նախարարության N814 15.07.2011 | |
| **Տարրական հանրակրթական ծրագիր** | Ա N0668 | Սահմ. տեղ՝ 244 |
| **Հիմնական հանրակրթական ծրագիր** | Ա N0657 | Սահմ. Տեղ՝ 255 |
| **Միջնակարգ հանրակրթական ծրագիր** | N0546 | Սահմ. Տեղ 260 |
| **Պետական իրավունքներ** | Կլոր կնիք,ինքնուրույն հաշվեկշիռ, գանձապետական հաշիվ | |
| **Հասցե** | ՀՀ Արարատի մարզ գ. Նորաշեն Գայի փ.1 | |
| **Հեռախոս** | 098653157 | |
| **Դպրոցի էլեկտրոնային փոստի հասցե** | arnorashen@schools.am | |
| **Դպրոցական կայքի հասցե** | http://norashen-ararat.schoolsite.am | |
| **Ֆեյսբուքյան սոցիալական կայքի հասցե** | ՀՀ Արարատի մարզի Նորաշենի Ավ. Իսահակյանի անվ. միջն. դպրոց | |

| Բնութագիր | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|
| *Դասերի սկիզբ, ավարտ* | 9:00 - 15:00 | 9:00 - 15:25 |
| *Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածություն* | 27,9 դրույք | 26,4 դրույք |
| *Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցություն* | 1: 11 | 1 : 11 |
| *Դասարանների միջին խտություն* | 25-26 | 26-27 |
| *Ղեկավար և վարչական աշխատող* | 4 | 4 |
| *Ուսուցիչներ*<br>*Ուսուցչի օգնականներ* | 32<br>5 | 32<br>5 |
| *Միջին մասն. կրթությամբ ուսուցիչներ* | 1 | 1 |
| *Աշխատողների ընդհանուր թիվը* | 58 | 59 |
| *Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ* | 11 | 12 |
| *Բարձրագույն կրթությամբ մանկավարժներ* | 41 | 41 |
| *Հիմնական ուսուցիչներ* | 31 | 32 |
| *Համատեղությամբ աշխ. ուսուցիչներ* | - | 1 |

**ՀՀ Արարատի մարզի Նորաշենի Ավ . Իսահակյանի անվ. միջն դպրոցի**
**2022-23 ուստարվա կազմակերպական կառուցվածքի գծակարգ**




ՀՀ Արարատի մարզի Նորաշենի Ավ . Իսահակյանի անվ. միջն դպրոցի 2023-24 ուստարվա կազմակերպական կառուցվածքը տնօրենի նշանակումից հետո փոփոխության է ենթարկվելու՝ ըստ կարգի:

| | |
|---|---|
| **Հաստատու թյան գործունեու թյունը** | Հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա: Բավարարում է սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման այնպիսի ուղիներ, որոնց արդյունքում յուրաքանչյուր սովորող հիմնարար գիտելիքներ ստանալով որոշակի ոլորտում կարողանա ինքնահաստատվել և դառնալ հաջողակ:Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է: |
| 1.Դպրոցի գործունեու թյան կրթական կարիքների բավարար ման ուղղություն ներ | Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով կառավարման, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և վարչատնտեսական գործունեության ոլորտներում կրթական կարիքների բավարարման օպտիմալ ուղղություններ գտնել և կիրառել<br>ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ<br>-կրթության կազմակերպման գործընթացի բարեփոխում,<br>-դպրոցը ժամանակի զարգացող պահանջներին համապատասխան որակ ապահովող մասնագետներով համալրում<br>-վեր հանել դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, գնահատել ռիսկերը,<br>-կատարել իրավիճակի վերլուծություն<br>-անձնակազմի հանդեպ պահանջների որոշում<br>-աշխատակիցների անընդհատ ուսուցում, աշխատակազմի գնահատում, աշխատակազմի արդյունավետության կառավարում, կազմակերպական զարգացում<br>-համագործակցել տարբեր շրջանակների հետ՝ ուսման արդյունավետությունը բարձրացնելու, առաջատար փորձ ձեռք բերելու, դպրոց-ծնող-ընտանիք կապը ապահովելու տեսլականով |

| | |
|---|---|
| | -փորձառու վարչական և մանկավարժական համակազմ ունենալ, մասնակցային և համագործակցային աշխատանք կատարել<br>-խրախուսման միջոցները՝ մշակված անվանակարգեր, շնորհակալագրեր՝ դպրոցասիրության և դպրոցը լավագույնս ներկայացնելու համար<br>- ըստ անհրաժեշտության իրականացնել ներդպրոցական վերահսկողություն, հետադարձ կապ հաստատելու համար և ամփոփել մանկավարժական համակազմի գործունեության համապատասխանությունը պլանավորված աշխատանքի արդյունքներին<br>- իրականացնել կազմակերպված թիմային աշխատանք՝ պլանավորում-կատարում-ստուգում-վերլուծություն պլանավորում սկզբունքով<br>- գտնել, հասունացնել, կատարելագործել և պահպանել իրենց գործին նվիրված համախոհների ուժեղ և միասնական թիմ, լավատես ու հայրենասեր որակյալ մասնագետներ<br>ՈւՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ՝<br>-նպաստել՝ սովորողի անհատական կրթական կարիքների բավարարմանը,<br>-ուսուցման ծրագրային բովանդակության բարեփոխմանը,<br>-ուսումնառության գնահատված արդյունքների ցուցանիշների բարձրացմանը,<br>-ձևավորել ուսուցման բարձր արժեհամակարգ,<br>-ապահովել ուսուցման բարձր որակ, արդյունավետ և ժամանակակից պահանջներին համապատասխան կրթություն<br>-համընդհանուր ներառական կրթության իրականացում<br>Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում<br>-Արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը<br>-Պարտուսահասակ աշակերտների ուսման և դաստիարակության ամենօրյա ուշադրության ապահովում<br>- Ռազմահայրենասիրական և ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների ապահովում:<br>-կրթության որակի բարելավմանը միտված շարունակական միջոցառումներ ՝ սեմինարներ, վեբինարներ, վերապատրաստումներ /մասնակցել և կազմակերպել/<br>-Դպրոցում ձևավորված ավանդույթներիշարունակականություն<br>-Հիշատակի և խոնարհման երթեր՝ Ծիծեռնակաբերդ, Եռաբլուր, Հաղթանակ զբոսայգի, Կոմիտասի այգի, հատկապես Ավ. Իսահակյանի շիրիմին<br>- բացահայտել երեխայի ունակությունները, տաղանդը և ապահովի նրա անընդհատ զարգացումը:<br>-Ուսուցիչների ինքնակրթության և դասավանդման մեթոդների ստեղծագործական մակարդակի բարձրացում:<br>- Գիտելիքների որակական նոր ցուցանիշների աստիճանական ակնկալում:<br>- աշակերտին սովորեցնել սովորի սովորել և դպրոցում գտնի դրա բանալին:<br>- ապահովել ուսուցման մեթոդների իմացություն և կիրառում՝ ազգային, համամարդկային բարոյական արժեքների վրա հիմնված կրթություն և դաստիարակություն կազմակերպելու համար:<br>ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ<br>- կրթության կազմակերպման միջավայրի բարելավում,<br>- ապահովել աշակերտների մտավոր զարգացման պայմանները:<br>- բավարար ռեսուրսների ձեռքբերում՝ ծրագրում ամրագրված դրույթները իրագործելու համար<br>- վարչատնտեսական գործունեության արդյունավետ կառավարում: |
| 2.Դպրոցի գործունեությունը համապատասխանում է պետության | Դպրոցի գործունեությունը համահունչ է Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականությանը, կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությանը, դպրոցի կանոնադրությանը: Կրթության բովանդակությունը անընդհատ բարեփոխվում է՝ մոտենալով տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական և մանկավարժական պահանջներին: Միջնակարգ դպրոցի գործունեությունը իր սովորողներին ազգային հենքի վրա տարրական և միջնակարգ որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը, որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Մեր օրերում և՛ |

<table>
<tr>
<td>կրթական քաղաքականության միտումներին</td>
<td>
հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:
Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:
Դպրոցի զարգացման հիմքում դպրոցի առաքելությունն է: Միայն առաքելության հստակ սահմանումից հետո կարելի է որոշել հաստատության նպատակներն ու խնդիրները: Յուրաքանչյուր կրթական հաստատության առաքելությունը արտահայտում է նրա փիլիսոփայությունը: Այսօր գիտելիքը ամենուր է: Կան գիտելիք ստանալու բազմաթիվ աղբյուրներ և հնարավորություններ: Հետևաբար՝ դպրոցը գիտելիք փոխանցելու աղբյուրներից ընդամենը մեկն է: Եվ որպեսզի աշակերտները ցանկանան դպրոցից գիտելիք ստանալ, ուսուցիչը պետք է լինի հետաքրքիր մարդ, ունենա սովորեցնելու, սովորելու,լսելու և հասկանալու հմտություններ: Մերօրյա դպրոցի հենասյուները պետք է լինեն արհեստավարժ ուսուցիչները: Ուսուցիչը շատ կարևոր դեր ունի ուսուցման գործում, սակայն գործընթացի կենտրոնում պետք լինի սովորողը: Ուսուցիչը պետք է կարողանա դասարանում ստեղծել հրապուրիչ ուսումնական միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող ազատ և անկաշկանդ կդրսևորի իր առավելագույն ներուժը՝ անկախ իր հնարավորություններից:
Կարևոր է նշել նաև, որ դպրոցի տնօրենի աշխատանքում կան որոշակի մարտահրավերներ,քանի որ այսօրեական ուսուցիչները պետք է կերտեն ուսումնառության նոր ուղիներ՝ առաջնորդելով ուսումնական գործընթացը:
Նորաշենի միջն. դպրոցի գործունեության ձևավորման համար հաշվի են առնվել դպրոցի մանկավարժների, սովորողների և ծնողների կարծիքները:
Գործունեության հիմքում դրվել են հետևյալ խնդիրները՝
<ul>
<li>Ստեղծել սովորողների կողմից բնության, հասարակության տեխնիկայի, արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ</li>
<li>Ձևավորել համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային –մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի</li>
<li>Իրականացնել սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինպատրաստության համալիր ծրագիր</li>
</ul>
ՀՀ Արարատի մարզի Նորաշենի Ավ. Իսահակյանի անվ. միջն. դպրոցի առաքելության հիմքում նախատեսում եմ ստեղծել, իրականացնել և կատարելագործել վարչական, ուսումնադաստիարակչական, մեթոդական՝ ավանդական և նորարարական լավագույն մշակույթ՝ համագործակցելով՝
Ծնողական համայնքի հետ
<ul>
<li>Ծնողական ժողովների,ծնողխորհուրդների կազմակերպում՝ըստ կարգի</li>
<li>Կազմակերպել միջոցառումներ,սեմինարներ հոգեբանների, մանկավարժների հաղորդմամբ՝ ծնող-դպրոց փոխհարաբերության ակտիվ, օգտակար, նպատակային լինելու մասին</li>
</ul>
Կառավարման և ղեկավարման մարմինների հետ
<ul>
<li>Տեղեկացված լինել և կիրառել Կառավարության և ԿԳՄՍ նախարարության կողմից տրվող գործող օրենքները, հրամանները, կարգերը</li>
<li>Համագործակցել և ապահովել ուսուցիչների և աշակերտների տեղեկացվածությունը և մասնակցությունը «ԿԶՆԱԿ» հիմնադրամի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, մրցույթներին, նոր ծրագրերին</li>
<li>Ակտիվություն դրսևորել լիազոր մարմնի հրահանգների, կարգադրությունների կատարման գործում՝ հետևելով պետության կրթական քաղաքականության միտումներին</li>
</ul>
Համայնքի հասարակության ակտիվ խմբերի հետ
<ul>
<li>Կազմակերպել հանդիպումներ, լսումներ տեղական ինքնակառավարման աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների, երիտասարդ մասնագետների, ակտիվ շրջանավարտների հետ</li>
<li>նպաստել անձնակազմի, մանկավարժների և աշակերտների շրջանում համայնքային կառավարման, խնդիրների վերհանման, համայնքային ծրագրերի մշակման, իրագործման և վերահսկման գիտելիք և</li>
</ul>
</td>
</tr>
</table>

հմտություն ձեռք բերելուն

- դաստիարակել համայնքային և ժողովրդավարական առաջադեմ գաղափարներ ու մոտեցումներ ունեցող սովորողներ , որոնք իրենց սովորածը կկիրառեն ոչ միայն իրենց կյանքում, այլ նաև համայնքին նպաստ բերող նախաձեռնություններում:

3.Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսների և հնարավորություններին

| Ենթակառուցվածքների | հնարավորությունները | Փաստացի վիճակը |
|---|---|---|
| ջրամատակարարում | շուրջօրյա | լավ |
| Կոյուղացում | կենտրոնացված | բավարար |
| էլեկտրամատակարարում | շուրջօրյա | բավ |
| գազամատակարարում | ջեռուցման սեզոնին | լավ |
| Ջեռուցում | անհատական հնոցի միջոցով | Լավ |
| սանհանգույցներ | 1 | Լավ |
| | 3 | Բավ, |
| Ինտերնետային կապ | բավարար՝ անհատական կրիչի, վայ-ֆայի, լարերի միջոցով | բավարար |
| Ուսումնական նպատակով ֆիզիկական հարմարեցումներ | | |
| Նիստերի դահլիճ | 2 | լավ |
| Ճաշարան | 1 | լավ |
| Բուժկետ | 1 | լավ |
| Գրադարան | 2 | լավ |
| Արհեստանոց | 1 | անբավարար |
| Առանձնասենյակ | 8 | լավ |
| Համակարգչային կաբինետ | 1 | լավ |
| Տեխնոլոգիայի կաբինետ | 1 | լավ |
| ՆԶՊ -ի կաբինետ | 1 | լավ |
| Մեծ մարզադահլիճ | 1 | անբավարար |
| Փոքր մարզադահլիճ | 1 | Լավ |
| Լաբորատորիա | 1 | անբավարար |
| Դասասենյակ | 30 | բավարար |
| Շախմատի կաբինետ<br>Առանձնասենյակ<br>Ապաստարան<br>Նկուղ | 1<br>10<br>1<br>2 | բավարար<br>բավարար<br>բավարար<br>բավարար |

Մարդկային ռեսուրսներ

| | |
|---|---|
| Տնօրեն | 1 |
| Փոխտնօրեն | 2 |
| ՄԿԱ գծով փոխտնօրեն | 1 |
| ԴԱԿ | 1 |
| Ուսուցիչներ | 37 |
| Դպրոցի խորհրդի անդամներ | 9 |
| Մանկավարժական խորրդի անդամներ | 44 |

| | |
|---|---|
| Աշակերտական խորհրդի անդամներ | 20 |
| Աշխատողների ընդհանուր թիվ | 59 |
| Աշակերտներ | 423 |

Դպրոցի ենթակառուցվածքները մշտապես գտնվում են իմ ուշադրության կենտրոնում և նպաստում են ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպմանը: Կատարում եմ առկա մասնագետների մասնագիտական որակների շարունակական բարելավում, մանկավարժական համակազմի և աջակցման թիմի համալրում երիտասարդ կադրերով

## ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Ուսումնական ֆիզիկական միջավայրի ապահովում՝ուսման առաջադիմության և որակի բարելավման համար
2. Արտադպրոցական , անհատական, համայնքային, միջազգային ծրագրերի ուղղորդում դեպի դպրոց
3. Տարեկան սահմանված աշխատանքային պլանների հետևողական իրականացում, կրթության որակի համապատասխանեցում ՀՊՉ ին
4. Դպրոցի կառավարման, ուսումնական գործի կազմակերպման նկատմամբ նոլոր օղակների պատասխանատվության բարձրացում
5. Պետության զարգացման համար գիտելիքով հարուստ և առողջ քաղաքացու ձևավորում
6. Պատրաստված և նորարարություններին մոտիվացված ուսուցչական թիմի կատարելագործում
7. Համայնքում որպես առաջադեմ դպրոցի ապահովում
8. Ուսումնական արդի միջավայրում նորարարական ինտերակտիվ մեթոդների կիրառում
9. Բազմակարծիք, ներառական, մասնակցային կրթության միջավայրի ապահովում
10. Կրթության շահառուների իրավունքների պաշտպանության բարձրացում
11. Գիտականորեն մրցունակ աշխատակիցների և սովորողների ապահովում և նրանց խրախուսում:
12. ՏՀՏ ոլորտի և նորարարությունների տեղեկացվածության կատարելագործում

## ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ուսումնական ֆիզիկական միջավայրը կատարելագործել ,նպաստել կրթության շահառուների՝ աշակերտների և ուսուցիչների ուսումնառության և ուսուցման միջավայրը դարձնել բարենպաստ:
2. Համագործակցել վարչատնտեսական համակարգողի հետ և նպաստել լրացուցիչ ֆինանսների մուտքի ապահովմանը
3. Վերահսկելի դարձնել դպրոցի յուրաքանչյուր օղակի աշխատանքը՝ պահպանելով հաշվետվողականությունը և աշխատանքի թափանցիկությունը: Բոլորի ասելիքը լսելի դարձնել և թիմային որոշումներ կայացնել: Կատարելագործել դպրոց-ծնող-համայնք կապը:
4. Կազմակերպել աշակերտական ինքնակառավարման մարմինների գործունեության լավագույն մշակույթ:
5. Մանկավարժների համար կազմակերպել հանդիպումներ, ֆորումներ, հանդիպումներ՝ մեթոդական, ՏՀՏ, մասնագիտական , հասարակական, սոցիալական թեմաներով:
6. Մշտական համագործակցություն ապահովել համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ և օգտագործել նրանց ներուժը:
7. Յուրաքանչյուր աշխատակցի որակյալ և պատասխանատու աշխատանքի լավագույն արդյունքով ապահովել դպրոցի հեղինակությունը:
8. Կազմակերպել մեթոդական, ուսումնական քննարկումներ, վերլուծություններ, տալ գնահատականներ,խրախուսել և պատրաստել հաշվետվություններ:

9. Կազմակերպել երկարօրյա ուսուցում, որի կազմակերպումը կնպաստի ցածր առաջադի մություն ցույց տվող աշակերտներիուսման որակը բարձրացնել՝ համապատասխան ՀՊՉ-ի:
10. Բոլոր օլիմպիադաներին, մրցույթներին, և կազմակերպվող առաջնություններին ունենալ առնվազն մասնակցություն:
11. Բարձրացնել կառավարման , վարչատնտեսական, ուսումնադաստիարակչական գործընթացում տեղեկատվական հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը:
12. Կատարելագործել դպրոցի կառավարչական գործունեությունը կանոնակարգող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը

## ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՌԿԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

1. Շենքային և հողատարածքի մեծ հնարավորություն:
2. Կրթական պետական քաղաքականություն, ձեռնարկատիրական գործունեություն, նյութատեխնիկական բավարար բազա :
3. Հոգատար, հետևողական , դպրոցական խնդիրներին ինքնակամ լուծում տվող դպրոցասեր մարդիկ:
4. Հայրենասիրությամբ, հայ մշակույթի և հայեցի դաստիարակության ու կրթության ոգով տոգորված,ինքնակրթությամբ զբաղվող մանկավարժներ:
5. Ակտիվ, ապագայի նկատմամբ իրատեսական պատկերացում ունեցող աշակերտական համակազմ:
6. Դպրոցի նշանակությունը, նպատակներն իմացող և խնդիրներով զբաղվող համայնք:
7. Բարոյահոգեբանական կայուն ուսումնական միջավայր:
8. Ծրագրերի, թեմատիկ և օրվա դասի պլանների հետևողական կատարում:
9. ՏՀՏ գործիքներին տիրապետող ,արդի մտածելակերպ ունեցող աշխատակիցներ ,որոնք տիրապետում են էլեկտրոնային փաստաթղթերի /օրենքներ, կարգեր՝ կրթությանը առընչվող,Կանոնադրություն ,ՀՊՉ , Լիցենզիա, տարիֆիկացիա, Ուսպլան, ՈւԴԱՊ,ՆԴՎ պլանավորում, իրավական ակտեր,թեմատիկ պլաններ, ներքին և արտաքին գնահատումներ, վարչատնտեսական փաստաթղթեր և այլն …/ կազման, համացանցում տեղադրման գործընթացներին:
10. ՏՀՏ գործիքների առկայություն, նորարարություններին ընդառաջ գնացող մանկավարժական և աշակերտական համակազմ:
11. Ֆինանսատնտեսական կայուն վիճակ

## ՌԻՍԿԵՐԸ

1. Շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի ժամանակի պահանջին չհամապատասխանություն
2. Դպրոցի շահառուների կողմից կատարված աշխատանքների հաշվետվողականության մեխանիզմների անկատարություն
3. Դպրոցի կառավարմանը մասնակցող ,խորհրդակցական մարմինների գործունեության հնարավոր բացասական ազդեցություններ: Քննարկումների ընթացքում նեղ անձնական ,ընտանեկան, քաղաքացիական հարցերի առաջացում: Հասարակական գործերի նկատմամբ հետաքրքրության պակաս:
Հասարակության արատավոր երևույթների արտացոլում դպրոցական կյանքում, ազրեսիվ վարքագիծ, ընտանիքում դաստիարակության պակաս
4. Դպրոցի վերահսկողությունն իրականացնող պետական մարմինների կողմից դպրոցի գործունեությանը հնարավոր բացասական միջամտություններ
5. Ծնողական համայնքի կողմից դպրոցական գործունեության մասնակցության պասիվություն

6. Ուսման և միջավայրի նկատմամբ սիրո և հոգատարության դաստիարակության խոչընդոտներ / հեռախոս, ՏՀՏ խաղեր, մոլորություններ և այլն/
7. Մանկավարժների ինքնազարգացմանը խանգարող սոցիալական խոչընդոտներ
8. Դպրոցի գործունեության վերաբերյալ համայնքում ձևավորված կարծրատիպեր
9. Դպրոցի աշխատանքային ակտիվ գործելակերպի մշակույթին չհարմարվողներ
10. Ուսումնառության արդյունքների նկատմամբ սովորողների, ուսուցիչների և ծնողների անտարբերություն
11. ՏՀՏ ծրագրերի ուսումնական և ժամանցային նպատակներով օգտագործման տարբերակման կարողության, մեդիագրագիտության թույլ մշակույթ սովորողների շրջանում
12. ՏՀՏ ծրագրերի իմացության և օգտագործման միջին կարողությունների պակաս ուսուցիչների որոշակի մասի մոտ
13. Պետական բյուջեի, դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ

**Զարգացման ծրագիրը կազմել եմ, վերլուծության ենթարկելով իրավիճակը, նպատակադրելով, արդյունքների գնահատման և վերահսկողության մեխանիզմները մշակելով, հետևյալ ոլորտները՝**

1. Դպրոցի շենքային պայմանները
2. Դպրոցի նյութատեխնիկական բազան
3. Դպրոցի նյութատեխնիկական բազան հաշվետու ժամանակաշրջանում
4. Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը և խորհրդակցական մարմինները
5. Դպրոցի համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ
6. Դպրոցի ուսումնական միջավայրը
   Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրը
   Դպրոցում ազգային - մշակութային մթնոլորտի ձևավորման պայմաններ
   Դպրոցի սովորողների և աշխատողների առողջ ապրելակերպի, սոցիալական և բարոյահոգեբանական միջավայր
7. Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները
8. Աշխատակազմի արժնորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները
9. Դպրոցի տրամադրած կրթության որակը՝ չափորոշչային պահանջներին համապատասխան
10. Դպրոցի կողմից օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաները և նորարարությունները
11. Ուսումնական նպատակով կատարված ծախսերը՝ դրանց արդյունավետության և ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

**ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՄ, ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ, ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ, ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ն ԱՌՆՉՎՈՂ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ , ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԸ, ՑՈՒՑԻՉՆԵՐԸ՝ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ:**

Իրավիճակի վերլուծության հիմքում ընկած են դպրոցի գործունեության, ներքին գնահատման չափանիշները, ցուցանիշները, ստացված տեղեկատվությունը և դրանց վերլուծությունը, նպատակադրումը, կատարվող միջոցառումների գնահատումը և վերահսկումը՝ ըստ ոլորտների:

# 1. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| Ուժեղ տեղեր | Թույլ տեղեր |
|---|---|
| -Կապիտալ վերանորոգված մասնաշենք, շենքային մեծ մակերեսի , դպրոցամերձ հողամասի առկայություն<br>-Ապաստարանի, կաթսայատան առկայություն<br>-Տանիքն ամբողջությամբ վերանորոգված է<br>-Դպրոցի տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար<br>- Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են մաքրման և պահպանողական միջոցառումներ | -Ժամանակի պահանջին ոչ համապատասխան ապաստարանի առկայություն<br>-Չօգտագործվող երրորդ մասնաշենքի առկություն<br>-Մեծ սպորտդահլիճը չի շահագործվում<br>-Բացօթյա սպորտհրապարակի անմխիթարվիճակ է<br>-Ցանկապատը տեղ-տեղ անմխիթար վիճակում է |

| | |
|---|---|
| 1 ՆՊԱՏԱԿ | Յուրաքանչյուր սովորողի կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունը և ֆիզիկական մատչելիությունն ապահովող հարմարեցված միջավայրի բարելավում |
| ԽՆԴԻՐ | Ապահովել շենքային բավարար ֆիզիկական պայմաններ, սովորողների կրթական կարիքների իրացման գործը նպատակին հասցնելու համար |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Հարմարավետ և ապահով դպրոցական միջավայր |
| ՌԻՍԿԵՐ | Ֆինանսական միջոցների պակաս |
| ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Համագործակցել հովանավորների , դոնոր կազմակերպությունների հետ<br><br>Շենքային, հողային մեծ, ազատ, մաքուր տարածք |

| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ; | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1/ Պահպանել շենքի և տարածքի անվտանգ շահագործումը. | տնօրենություն | ուստարվա ընթացքում | մարդկային ռեսուրս | Պետական բյուջե /այսուհետ՝ՊԲ/ |
| 2/ Հետևողական լինել համակարգող – հաշվապահ , համակարգող սպասարկող անձնակազմ փոխհարաբերություններում | տնօրեն | | մարդկային ռեսուրս | |
| 3/ Օգնել վերլուծելու դպրոցի եկամուտների և ծախսերի հարաբերակցությունը ըստ նախորդող տարիների համեմատելով ուսման որակի հետ | տնօրեն | տարվա վերջում | | ՊԲ |
| 4/ Նկարագրել տարբեր ոլորտներում անհրաժեշտ աշխատանքը, նպատակը, գործողությունները, ծախսերը, առկա ռեսուրսները, անհրաժեշտ ռեսուրսները, ռիսկերը և ներկայացնել համակարգողին | տնօրեն | սեպտեմբեր | հաշվետվություններ | ՊԲ |
| 5/ Հետևել պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումների կատարմանը | տնօրեն | ամեն ամիս մինչև15 ը | հետևողականություն, մշտադիտարկում | |
| 6/ Աջակցել համակարգողին ՝ գտնելու պետական | | | | ՊԲ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ծրագրերով դպրոցի մեծ սպորտդահլիճի կապիտալ նորոգումը կազմակերպելու և դրա արդյունքում դպրոցի կողմից շենքային պայմանների բարելավմանն ուղղված կապիտալ ծախսերի ավելացմանը:<br><br>7/ Փնտրել հովանավոր դպրոցի բոլոր տարիների շրջանավարտների մեջ մեծ մարզադահլիճը վերանորոգելու համար<br><br>8/Դիմել մարզային և համայնքային իշխանություններին մեծ մարզադահլիճի վերանորոգման հարցով<br>9/Նպաստել լաբորատորիաների տարածքի վերանորոգմանը<br>10/Դիմել վարչատնտեսական համակարգողին շին աշխատանքներ տանել II մասնաշենքի միջանցքների եվրոդռներով և եվրոպատուհաններ տեղադրելու համար | տնօրեն<br><br>տնօրեն<br><br>տնօրեն<br><br>տնօրեն<br><br>տնօրեն | 2023-2028թթ<br><br>2023-28թթ<br><br>2023-28թթ<br><br>2023թ-28թ<br><br>2023թ-28թ | նախագիծ , ծրագիր<br><br>նախագիծ , ծրագիր<br><br>նախագիծ , ծրագիր | ՊԲ<br><br>ՊԲ/, արտաբյուջե, իրավաբանական անձանց երաշխավորված դրամական հատկացումներ ,ոչ կառավարական կազմակերպությունների նյութական ու ֆինանսական միջոցներ, |
| 11/Դիմել ծնողական համայնքին ցանկապատի վերանորոգման աշխատանքներ կազմակերպելու համար | տնօրեն դասղեկներ | 2023-28թթ | կրթական գործում առաջամարտիկ դառնալ ցանկացող ծնողական և աշակերտական համակազմ | ծնողական ներդրում, նախկին շրջանավարտների բարեգործական միջոցներ, ծնողական միջոցներ և ավագ դպրոցի աշակերտական աշխատուժ |

Արդյունքների գնահատում և վերահսկողություն

Առողջ և ապահով դպրոցական միջավայր

Ուսումնական հաստատությունը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը

Վերահսկողության մեխանիզմներ՝ մշտադիտարկում
Վերահսկող՝ տնօրենություն, համակարգող
Ցուցիչ՝ ՈւԴԱ հաշվետվություն,ՆԳ հաշվետվություն

ՉԱՓԱՆԻՇԵՐ ԵՎ ՑՈւՑԱՆԻՇՆԵՐ

Առողջ և ապահով դպրոցական միջավայրում պահպանվում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը.

Դպրոցի տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար, ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից:

Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին:

Տարածքը մաքուր է: Թղթի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում են հատուկ աղբարկղերում և դուրս են բերվում հաստատության տարածքից:

Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատ-
Դպրոցում պահպանված են սովորողների ու աշխատակազմի համար ուսումնական
գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության ու սանհիտարահիգիենիկ նորմերը,
կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություններ:

Ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմերին: Դպրոցի շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր:

Դպրոցն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով:

Շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ և այլն), ng
սարքավորումները ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին,
անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին,բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը: Միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են հատակին: Համակարգչային կաբինետի և ստորին հարկերի որոշ պատուհաններն ունեն շարժական մետաղյա վանդակաճաղեր: Օգտագործվող կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:

Մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները: Նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով, տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:

Դպրոցի սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին
: «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացներն անցկացվում են փոքր մարզադահլիճում:

| 2. | Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերաբերյալ իրավիճակի վերլուծություն |
|---|---|
| **Ուժեղ տեղեր** | **Թույլ տեղեր** |
| ❖ Ամբողջական լոկալ ջեռուցում<br>❖ Մշտական ջրամատակարարում<br>❖ Դպրոցն ունի գործող գրադարան, որը հագեցած է ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով: Գրադարանից կանոնավոր կերպով օգտվում են սովորողները, ուսուցիչները և վարչական կազմը,գրադարանը պարբերաբար համալրվում է նոր տպագրվող գեղարվեստական գրականության գրքերով<br>❖ Նյութատեխնիկական բազայի բավարար առկայություն կա հետևյալ կաբինետներում՝ ապաստարան, բուժկետ,ինֆորմատիկայի կաբինետ, ՆԶՊ դասասենյակ և զինանոց, փոքր մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճներ, ճաշարան, հաշվապահի, գործավարի, փոխտնօրեններիառանձնասենյակներ,տնօրենի կաբինետ, ուսուցչանոց, հոգեբանի կաբինետ, տեխնոլոգիայի կաբինետ, կաթսայատուն, սանհանգույցներ, բուժկետ, շախմատի դասասենյակ | ❖ Ուսումնանյութական բազայի պակաս ( համակարգչային տեխնիկա, քարտեզներ,պաստառներ, գրքեր)<br>❖ Սպորտգույքի պակաս, Տեխնոլոգիայի կաբինետի գույքի պակաս<br>❖ Չեն գործում բնագիտական առարկաների լաբորատորիաները<br>❖ Մեծ սպորտդահլիճը չի շահագործվում<br>❖ Հանդերձարանները ժամանակակից ստանդարտներին համապատասխան չեն<br>❖ Դասասենյակների լուսամուտների վարագույրները ոչ պատշաճ վիճակում են<br>❖ Տղաների արհեստանոցը հնամաշ և չձահագործվող գույքով է լեցուն<br>❖ Երգի կաբինետի բացակայություն,<br>❖ Հրաձգարանի բացակայություն<br>❖ Արմաթ ինժեներական սենյակի,ունիվերսալ լսարանների, տեսախցիկների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 ՆՊԱՏԱԿ | **Ուսման որակի բարձրացում , ուսուցիչների ուսուցման և աշակերտների ուսումնառության մոտիվացում նյութատեխնիկական բազայի արդի պարագաների միջոցով** | | | |
| ԽՆԴԻՐ | Դպրոցի նյութատեխնիկական բազան համալրել ժամանակի պահանջին համապատասխան ուսումնական գույքով և նյութերով՝ ուսման որակը բարձրացնելու նպատակով | | | |
| ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | Ուսուցման որակի և ուսման նկատմամբ հետաքրքրության և սպասելիքների առաջացում | | | |
| ՌԻՍԿԵՐ | Ֆինանսական միջոցների պակաս | | | |
| ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Հանդիպումներ կազմակերպել համայնքի ներկայացուցիչների հետ | | | |
| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Արտերկրի ֆինանսական մեծ հնարավորություններ ունեցող շրջանավարտներ | | | |
| ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՈՋԱՌՈՒՄՆԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ |
| 1/ Համակարգողին ներկայացնել անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաների պահանջարկը | տնօրեն | 2023թ. 2028թ. | ԴԶԾ | պետական բյուջե |
| 2/ Կահավորել կաբինետները, դասարանները, լաբորատորիաները, | ուսուցիչներ | 2023-2028թթ | սեղան, աթոռ, գրատախտակ,կավիճ | ընթացիկ վերանորոգման և գույքի ձեռքբերման միջոցներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3/ Նորոգումների ժամանակ հետևել կաբինետային սենյակների , լաբորա տորիաների,մարզադահլիճի հանդերձա րանների և հանդիսությունների սրահի հարմարեցմանը դպրոցի կրթական պահանջներին և սովորողների առողջու թյան պահպանման կանոններին /օդա փոխություն,ակուստիկա,ծխատար/ | տնօրենությ ուն | շինարարա կան աշխատանք ների ընթացքում | պետական ծրագրեր , միջազգային ծրագրեր , դրամաշնորհներ | պետական բյուջե, հովանավորների միջոցներ |
| 4/ Ծնողների և սպասարկող անձնակազմի, աշակերտների միջոցով կազմակերպել հանրօգուտ աշխատանք՝ վերանորոգել հին գույքը | տնօրենութ յուն, դասղեկներ ծնողներ | 2023-2028 | շահագրգիռ մարդկային ռեսուրսների բարի կամք | ծնողական ներդրումներ |

## 3 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

- Վերանորոգվել է ֆիզիկայի դասասենյակը
- Ամբողջական լոկալ ջեռուցում է կազմակերպվել, որը թույլ տվեց դպրոցում ուսուցումը կազմակերպել մեկ հերթով:
- Կազմակերպվել է հին ջրագծերի, ցայտաղբյուրների վերանորոգման աշխատանքներ մշտական ջրամատակարարումը ապահովելու համար
- Աշխարհագրություն, կենսաբանություն, ֆիզիկա առարկաների դասավանդմանը նպաստելու նպատակով մասամբ նորացվել է նյութատեխնիկական բազան
- Ապաստարանը մաքրվել է, բարեկարգվել
- Ինֆորմատիկայի կաբինետը հագեցած է ՏՀՏ և ֆիզիկական գույքով, որը ապահովում է ուսումնական գործընթացի արդի իրականացումը և հարմար ֆիզիկական միջավայրը
- ՆԶՊ կաբինետը, զինանոցը ապահովված են բավարար քանակի նյութատեխնիկական բազայով
- Դպրոցի փոքր Ֆիզկուլտդահլիճի բավարար շենքային և նյութատեխնիկական բազայի, մարդկային ռեսուրսների պատրաստականության շնորհիվ ապահովվում են ֆիզկուլտուրայի բարձր ցուցանիշներ

❖ Հանդիսությունների դահլիճի շենքային պայմանները լավ են
❖ Ճաշարանի առկայություն
❖ Հաշվապահի, գործավարի, փոխտնօրենններիառանձին սենյակներ հարմարավետություն
❖ Ուսուցչանոցի առկայություն
❖ Տնօրենի կաբինետի առկայություն
❖ Տանիքն ամբողջությամբ վերանորոգված
❖ Կոյուղին ջրագիծը սանհանգույցները ջեռուցման համակարգը թարմացված է
❖ Կաթսայատան առկայություն
❖ Սանհանգույցների առկայություն
❖ Գրադարանի առկայություն
❖ Շախմատի դասասենյակի առկայություն
❖ Զենքի պահեստի առկայություն
❖ Բացօթյա սպորտհրապարակը մաքրվում է , պահվում բավարար վիճակում
❖ Վերանորոգվել և նյութատեխնիկական բազայով է հարստացվել բուժկետը
❖ Ընդլայնվել և ներանորոգվել և կահավորվել են դպրոցի ճաշարանը , խոհանոցը
❖ Բարեկարգվել է բակի ծաղկանոցը, թարմացվել դեկորատիվ ծառերով ու թփերով:
❖ Դպրոցամերձ հողամասում կատարվել է ծիրանի դեղձի ,սալորի, սերկևիլի ծառատունկ, որոնք մեծ պատասխանատվությամբ խնամվում են և զարգացվում:
❖ Թարմացվել են էլեկտրական սարքավորումները, էլեկտրալարերը
❖ Լոկալ բարեկարգվել են առանձին դասարաններ
❖ Ժամանակի պահանջին համապատասխան վերանորոգվել է երկրորդ / տարրական/ մասնաշենքի տարիներ

շարունակ չգործող սանհանգույցը

- Մշտապես վերահսկվում և օպտիմալ լուծումներ են տրվում դպրոցապահպանության և նյութատեխնիկական բազայի պահպանման և նորացման գործառույթներին
- Նոր կարգին համաձայն, նախատեսում եմ համագործակցել վարչատնտեսական համակարգողի հետ և գտնել արդի դպրոցի և ուսուցման նորովի կազմակերպման համար պահանջվող ձևեր, միջոցներ , բարերարներ, ծրագրեր, միջոցառումներ և այլն

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Նորաշեն գյուղի Գայի 1 հասցեում շենքի տեղակայման տարեթիվ | 1967թ. | Պահանջարկ վարչատնտեսական համակարգողին |
| **2** | Շենքի ընդհանուր մակերեսը | 5372 քառ,մ | |
| **3** | Մասնաշենքեր | 3 | |
| **4** | եռահարկ | 2571 քառ.մ | շերտավարագույրներ |
| **5** | Երկհարկ | 1316 քառ.մ | Եվրոդռներով միջանքների բաժանում , եվրոլուսամուտների տեղադրում |
| | Երկհարկ | 396,9 քառ.մ | վերանորոգում |
| **6** | Հեռավորությունը ամենամոտ դպրոցից մոտակա բանուկ ժանապարհով | 2կմ | |
| **7** | Դպրոցին կից տարածքի մակերես | 3000 քառ,մ | խնամք |
| **8** | Վարձակալությամբ տրված տարածք | 253,6 քառ. մ | Շարունակել |
| **9** | Նկուղ | 1060 քառ.մ | |
| **10** | Ապաստարան | | Ժամանակակից բազա ապահովել |
| **11** | Սանհանգույց<br>Կաթսայատուն | 83 քառ.մ<br>26 քառ.մ | Վերանորոգում |
| **12** | Նիստերի մեծ դահլիճ | 160քառ.մ | հարդարում |
| **13** | Նիստերի փոքր դահլիճ | | |
| **14** | Մեծ ֆիզկուլտդահլիճ<br>Փոքր ֆիզկուլտդահլիճ | 438,6 քառ.մ<br>271,7 քառ.մ | վերանորոգում |
| **15** | Գրադարան<br>Գրապահոց | 71,4 քառ.մ<br>21 քառ.մ | Էլեկտրոնային գրադարան |
| **16** | Բացօթյա սպորտհրապարակ | 3700 քառ.մ | բարեկարգում |
| **17** | Բուժկետ | 15 քառ.մ | |
| **18** | Ճաշարան | 100 քառ.մ | ամանեղեն լվանալու սարք |
| **19** | Բուֆետ | 11քառ.մ | գտնել վարձակալներ |
| **20** | Տղաների արհեստագործական կաբինետ | 51,15 քառ.մ | ապահովել ժամանակակից գույքով |
| **21** | Ուսուցչանոց | 52 քառ.մ | |

| | | | |
|---|---|---|---|
| **22** | ՆԶՊ  կաբինետ | 53 քառ.մ | |
| **23** | Զենքի պահեստ | 8 քառ.մ | |
| **24** | ՆԶՊ ուսումնական խրամուղի | | Ստեղծել 1000 քառ.մ տարածքի վրա |
| **25** | Տեխնոլոգիայի կաբինետ | 38 քառ.մ | |
| **26** | Ինֆորմատիկայի կաբինետ | 51քառ.մ | էլեկտրոնային գրատախտակ |
| **27** | Հոգեբանի կաբինետ | 10 քառ.մ | |
| **28** | Բնագիտական առարկաների լաբորատորիաներ | 150  քառ.մ | Վերանորոգել և շահագործել, ձեռք բերել քիմիա առարկաների դասավանդման գույք |
| **29** | Դասասենյակներ | 923 քառ.մ | Լոկալ վերանորոգում |
| **30** | Աշակերտական սեղան | 430հատ | վերանորոգում |
| **31** | Աշակերտական նստարան | 550հատ | վերանորոգում |
| **32** | Գրատախտակ | 33հատ | |
| **33** | Մարկերային, մագնիսով գրատախտակ<br><br>Էլեկտրոնային գրատախտակ | 2հատ<br><br>0 | Տարրական բոլոր դասարանների համար ձեռք բերել<br><br>ձեռք բերել |
| **34** | Ուսուցչի սեղան | 113 հատ | Ձեռք բերել 10 հատ |
| **35** | Ուսուցչի աթոռ | 153 հատ | Ձեռք բերալ 20 հատ |
| **36** | Պահարան<br>Այդ  թվում չիրկիզվող | 130 հատ<br>6 հատ | |
| **37** | Համակարգիչ | 12 հատ | թարմացնել`  արդի  սերնդի |
| **38** | Նոութբուք | 22 հատ | |

## 4. Կառավարման և խորհրդակցական մարմինները

Դպրոցը սերտորեն համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ. դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:

Կառավարման խորհուրդը գործում է և մշտապես գործել է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրանց գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, Խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին: Դպրոցի կառավարման խորհուրդը օրենքով նախատեսված պարբերականությամբ հրավիրում է նիստեր, քննարկում դպրոցի խնդիրները, իր լիազորությունների շրջանակներում կատարում է առաջարկություններ:

Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար: Աշակերտական խորհուրդն ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը:Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին, կազմակերպում է միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական այցեր: Նախաձեռնությունների մասին տեղեկատվությունն ու կատարած աշխատանքըլուսաբանում են աշակերտական խորհրդի ֆեյսբուքյան էջում

Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին: Անչափ կարևորում ենք, աշակերտների կողմից բարձրացված հարցերի խորը և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողականության խթանումը:Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակացական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպել է բազում ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և այլ միջոցառումներ: Ծնողների հետ համագործակցությունը շարունակվել է նաև համավարակի պայմաններում: Նրանց հետ կապն իրականացվել է առցանց՝ սոցիալական տարբեր հարթակներում:

| Ուժեղ տեղեր | Թույլ տեղեր |
|---|---|
| -Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը և խորհրդակցական մարմինները՝ մեթոդական միավորումներ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները | -Խորհրդակցական մարմինների կողմից իրենցգործառույթների հստակ իրականացման, կանոնակարգման, միմյանց միջև արդյունավետ համագործակցության պակաս: |
| -Կառավարման մարմինների արդյունավետ աշխատանք: | - Խորհրդակցական մարմինների անդամների՝ միմյանց միջև ակտիվ ու արդյունավետ |

| | |
|---|---|
| | համագործակցություն պակաս |
| - Համագործակցություն ծնողական խորհրդի հետ: Ծնողական խորհրդի կողմից աջակցություն դպրոցին:Ծնողական համայնքի համախմբվածություն արտակարգ և ռազմական դրության պայմաններում: | - Կառավարման խորհրդի նիստերին անդամների բացակայություններ |
